ՏԵՂԵԿԱՆՔ
(«Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին», Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքների նախագծերի հոդվածներում առաջարկվող փոփոխությունների և լրացումների վերաբերյալ)

Լրամշակված տարբերակ

Կ-452[1]-24.01.2020-ՊԻ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2003 թվականի ապրիլի 18-ի ՀՕ-528-Ն Քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի՝

1)1-ին մասում «կատարելը» բառից հետո լրացնել «,նոտարի կողմից իրավաբանական նշանակություն ունեցող փաստ հաստատելու գործով վկայի կողմից սուտ ցուցմունք տալը» բառերը÷

2) 3-րդ մասում՝

ա) «գործի լուծման համար,» բառերից հետո լրացնել «կամ նոտարական ակտի կայացման համար» բառերը,

բ) «վճիռ կամ որոշում կայացնելը» բառերից հետո լրացնել հետևյալ բառեր «կամ նոտարի կողմից իրականացվող նոտարական գործողության ընթացքում մինչև նոտարական ակտ կայացնելը»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: